



2024

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Բովանդակություն

01 Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի կառավարման մարմինները 05

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկը որպես հաշվետու թողարկող 07

02 Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը 09

ՀՀ ֆինանսական համակարգը 10

03 Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 12

Ֆինանսական հաշվետվություններ 14

04 Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում 19

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 20

05 Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 22

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 23

06 Պատասխանատու անձանց հայտարարություն

25



Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով	04
Բանկի կառավարման մարմինները	06
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները	07
Բանկը որպես հաշվետու թողարկող	08

IDBank-ը մեկ հայացքով

2024թ. 1-ին կիսամյակի արդյունքներով

- Հայաստանի ամենաշահութաբեր բանկերի թոփ 5-յակում
- BNPL լուծումների առաջատար
- Տրանզակցիաների գծով առաջատար

Ակտիվներ	367 մլրդ.
----------	-----------

Պարտավորություններ	295 մլրդ.
--------------------	-----------

Ավանդներ, Հաշիվներ	203 մլրդ.
--------------------	-----------

Կապիտալ	72 մլրդ.
---------	----------

Չուտ շահույթ	8,2 մլրդ.
--------------	-----------

Moody's
վարկանիշ

Ba3 – երկարաժամկետ տեղական և արտարժույթով ավանդներ
Հեռանկար - կայուն

Հայաստանում անկանխիկ վճարումների ավելին քան 30%-ի ապահովում

- Visa միջազգային համակարգի ամենամեծ թվով թողարկված քարտեր
- Քարտերով վճարումների մոտ 26%* աճ
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների 16% աճ

Հաճախորդներ	635 հազ.
-------------	----------

Քարտեր	450 հազ.
--------	----------

Մասնաճյուղեր	13
--------------	----

Աշխատակիցներ	898
--------------	-----

Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ	84%
---	-----

“Գնիր հիմա, վճարիր հետո” 0%-ով POS տերմինալներ	9000+
---	-------

* Աճը ներկայացված է 2023թ.-ի 1-ին կիսամյակի նկատմամբ

Բանկի կառավարման մարմինները

Բանկի խորհուրդը



Արթուր Զավադյան
խորհրդի նախագահ



Կարեն Մարգարյան
խորհրդի անդամ



Ֆերնանդո Կաստիլյեիրաս
խորհրդի անդամ



Ելենա Խաչվանքյան
խորհրդի անդամ



Անդրեաս Բլազե
խորհրդի անդամ

Բանկի բաժնետերերը



“ID Group” CJSC
100% բաժնետեր

Բանկի վարչությունը



Միեր Աբրահամյան
Վարչության նախագահ



Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման
տնօրեն,
Վարչության անդամ



Սերգեյ Առաքելյան
Թվային Բանկինգի
տնօրեն,
Վարչության անդամ



Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ,
Վարչության անդամ



Արման Ասատրյան
Ներդրումային բիզնեսի
գծով տնօրեն,
Վարչության անդամ



Արթուր Զավադյան
Ռիսկերի կառավարման
գծով տնօրեն,
Վարչության անդամ



Տիգրան Մխիթարյան
Կորպորատիվ բիզնեսի
տնօրեն,
Վարչության անդամ



Լիլիթ Գրիգորյան
Գործառնական տնօրեն,
Վարչության անդամ

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Մենք նորարար ենք – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

Մենք թափանցիկ ենք – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

Մենք վստահելի ենք – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբեռհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

Մենք հավատարիմ ենք – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

Մենք թիմային ենք – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:


Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2024թ. 1-ին կիսամյակի ընթացքում բանկը հաջողությամբ իրականացրել է 3 պարտատոմսերի թողարկում՝ 10 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 3 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով:

2024 թվական	1-ին թողարկում	2-րդ թողարկում	3-րդ թողարկում	✓ Արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականություն
Թողարկման ընդհանուր ծավալը	5 մլն ԱՄՆ դոլար	5 մլն ԱՄՆ դոլար	3 մլրդ ՀՀ դրամ	
Տարեկան եկամտաբերությունը	4.25%	4.75%	9.5%	
Մարման ժամկետ	27 ամիս	39 ամիս	27 ամիս	

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



2024թ. հունիսի 30-ի դրությամբ թողարկված պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է 5 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով պարտատոմսը, իսկ մնացած 2-ը՝ տեղաբաշխման ընթացքում են:

2024թ. հունիսի 30-ի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 8 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 28 մլն 614 հազար ԱՄՆ դոլար և 500 մլն ՀՀ դրամ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

- Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝
- ✓ Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժույթային ռիսկ և այլն),
 - ✓ Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
 - ✓ Գնաճի ռիսկ

2

Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը


09

ՀՀ ֆինանսական համակարգը


10

ՀՀ տնտեսությունը


Տնտեսական ակտիվության ցուցանիշ




Գնաճ (տարեկան, %)*



Միջին փոխարժեքներ




Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)




*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ

ՀՀ ֆինանսական համակարգը


Բանկերի վարկերը ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ




1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույք



Բանկերի ավանդները (ներառյալ՝ հաշիվները) ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույք



3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական արդյունքների ամփոփում


12

Ֆինանսական հաշվետվություններ


14

Ֆինանսական արդյունքների ամփոփում


Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)




Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ (մլրդ ՀՀ դրամ)




Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)




Վարկային պորտֆելի աճի տեմպ



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)




Վարկային պորտֆելի կառուցվածք %




Ֆինանսական արդյունքների ամփոփում


Տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)




Չուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)




Միջնորդավճարների և այլ վճարների եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Գործառնական եկամուտ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ հարկումից հետո (մլրդ ՀՀ դրամ)



*Տարեկան ցուցանիշները արտացոլում են արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից ստուգված տվյալները:

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին միջանկյալ ամփոփ հաշվետվություն
«30» Հունիսի 2024 թ.

հազ. դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	01/04/2024 - 30/06/2024	01/01/2024- 30/06/2024	01/04/2023 - 30/06/2023	01/01/2023 - 30/06/2023
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	7,530,762	14,753,818	6,286,355	12,107,067
Տոկոսային ծախս	(2,280,360)	(4,486,061)	(1,657,719)	(3,297,846)
Զուտ տոկոսային եկամուտ	5,250,402	10,267,757	4,628,636	8,809,221
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	3,159,630	5,898,557	2,467,817	4,701,405
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(2,478,601)	(4,486,122)	(1,706,378)	(3,181,156)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ/(ծախս)	681,029	1,412,435	761,439	1,520,249
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	3,093,763	4,637,827	1,334,017	2,864,017
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	(300,711)	31,345	512,416	969,475
Զուտ իրացված (վնաս)/օգուտ ներդրումային արժեթղթերի գծով	11,824	17,377	(102,032)	(98,793)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	300,000	599,474	-	-
Զուտ այլ գործառնական (ծախս)/եկամուտ	(24,993)	(26,080)	(38,112)	5,903
Գործառնական եկամուտ	9,011,314	16,940,135	7,096,364	14,070,072
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(285,906)	(483,233)	115,926	(65,691)
Անձնակազմի գծով ծախսեր	(1,785,007)	(3,492,399)	(1,081,793)	(2,492,282)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,562,749)	(2,957,848)	(1,145,295)	(2,166,386)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	5,377,652	10,006,655	4,985,202	9,345,713
Շահութահարկի գծով ծախս	(1,021,516)	(1,826,801)	(939,395)	(1,781,577)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	4,356,136	8,179,854	4,045,807	7,564,136
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի				
<i>Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>				
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.				
իրական արժեքի զուտ փոփոխություն	(1,380)	145,842	(45,124)	85,348
շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	(1,269)	(1,693)	273,387	273,668
<i>Ընդամենը հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>	<i>(2,649)</i>	<i>144,149</i>	<i>228,263</i>	<i>359,016</i>
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ Ժամանակաշրջանի համար՝ առանց շահութահարկի	(2,649)	144,149	228,263	359,016
Ընդամենը համապարփակ եկամուտ Ժամանակաշրջանի համար	4,353,487	8,324,003	4,274,070	7,923,152

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

12/07/24թ.

Վարչության նախագահ՝ Մհեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ ամփոփ հաշվետվություն
«30» Հունիսի 2024 թ.

հազ. դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	30/06/24	31/12/2023թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	48,028,255	36,606,515
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	9,257,381	8,606,787
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	39,652,555	63,515,077
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	325,090	449,838
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	12,327,975	10,812,707
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	42,256,720	54,361,958
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	11,709,753	6,646,146
Հաճախորդներին տրված վարկեր	175,615,072	158,884,500
Արգրավված ակտիվներ	2,593,173	2,709,765
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	8,174,719	7,575,245
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9,921,407	9,687,175
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	3,383,925	3,188,475
Այլ ակտիվներ	3,373,609	3,630,008
Ընդամենը ակտիվներ	366,619,634	366,674,196
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	14,012,561	8,010,540
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	51,265,443	57,310,415
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	90,740	11,255
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	203,118,807	209,920,125
Ընթացիկ հարկային պարտավորություններ	967,330	2,258,501
Թողարկված պարտքային արժեթղթեր	15,062,185	15,506,851
Հետաձգված հարկային պարտավորություններ	623,850	442,859
Վարձակալության գծով պարտավորություններ	3,664,011	3,415,391
Այլ պարտավորություններ	6,305,912	6,313,467
Ընդամենը պարտավորություններ	295,110,839	303,189,404
ՍԵՓԱԳԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ	5,014,099	5,014,099
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	263,641	119,492
Զբաղիված շահույթ	32,259,205	24,379,351
Ընդամենը սեփական կապիտալ	71,508,795	63,484,792
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	366,619,634	366,674,196

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ ամփոփ հաշվետվություն
«30» Հունիսի 2024 թ.

հազ. դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	30/06/24թ.	30/06/23թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	14,283,175	11,945,916
Վճարված տոկոսներ	(3,974,007)	(2,133,520)
Ստացված միջևորդավճարներ և այլ վճարներ	5,898,557	4,701,405
Վճարված միջևորդավճարներ և այլ վճարներ	(4,486,122)	(3,181,156)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	107,564	181,364
Զուտ մուտքեր արտադրությունով գործառնականություններից	4,730,240	3,759,247
Այլ ստացված եկամուտ	(434,602)	(645,352)
Անձնակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(6,612,427)	(5,509,319)
Գործառնական ակտիվների (աճ/եկազում)		
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	103,561	709,908
Հակադարձ հետգնման պարամետրերի գծով ստացվելիք գումարներ	(688,398)	5,361,540
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառվածություններ	12,912,375	(6,357,484)
Հաճախորդներին տրված վարկեր	(18,443,088)	(22,402,492)
Այլ ակտիվներ	12,191,316	17,052,087
Գործառնական պարտավորությունների աճ/(եկազում)		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	(5,127,152)	(4,624,114)
Հետգնման պարամետրերի գծով վճարվելիք գումարներ	6,002,021	1,753
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(1,599,933)	5,708,479
Այլ պարտավորություններ	(1,744,609)	(1,841,327)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգուտագործված) գույք դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը	13,118,471	2,726,935
Վճարված շահութահարկ	(3,260,000)	(3,915,553)
Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգուտագործված) դրամական հոսքեր	9,858,471	(1,188,618)
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(1,787,352)	(2,071,810)
Անուտիցացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռք բերում	5,615,351	21,064,039
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մատումից	126,574	283,839
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(350,708)	(302,017)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	14,791	46,063
Ներդրումային գործունեության համար օգուտագործված դրամական հոսքեր	3,618,656	19,020,114
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	5,781,169	1,086,504
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(6,033,836)	(888,808)
Մուտքեր ներգրավված միջոցներից	1,222,078	5,395,755
Ներգրավված միջոցների մարում	(1,766,015)	(1,337,815)
Վճարված շահաբաժիններ	(300,000)	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	254,700	137,475
Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր	(841,904)	4,393,111
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույք աճ	12,635,223	22,224,607
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,211,347)	(1,089,986)
Անկախվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,136)	675
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները տարեկան դրությամբ	36,606,515	36,273,430
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջում	48,028,255	57,408,726

Վարչության նախագահ՝ Մհեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

Ֆինանսական հաշվետվություններ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ ամփոփ հաշվետվություն
«30» Հունիսի 2024 թ.

հազ. դրամ

ԱՆՎԱՐՈՒՄԸ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնահատումից աճ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ. (ստուգված)	33,971,850	5,014,099	96,918	(270,523)	19,859,725	58,672,069
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	7,564,136	7,564,136
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	85,348	-	85,348
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	273,668	-	273,668
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	359,016	-	359,016
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	359,016	-	359,016
Մնացորդը առ 30 հունիսի 2023թ. (չստուգված)	33,971,850	5,014,099	96,918	88,493	27,423,861	66,595,221

Մնացորդը առ 1 հունվարի 2024թ. (ստուգված)	33,971,850	5,014,099	-	119,492	24,379,351	63,484,792
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	-	-	-	8,179,854	8,179,854
Վճարված շահութաբաժիններ	-	-	-	-	(300,000)	(300,000)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	-	-	-
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	145,842	-	145,842
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,693)	-	(1,693)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	-	144,149	-	144,149
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	144,149	-	144,149
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք ժամանակաշրջանի համար	-	-	-	144,149	-	144,149
Մնացորդը առ 30 հունիսի 2024թ. (չստուգված)	33,971,850	5,014,099	-	263,641	32,259,205	71,508,795

Վարչության նախագահ՝ Միեր Աբրահամյան
Գլխավոր հաշվապահ՝ Անուշիկ Խաչատրյան

4

Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում

19

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

20

Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային Էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

630,000+ օգտատեր՝ Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 45%+-ը	Թվային բանկինգի փարժեք ֆունկցիոնալություն Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում սմարթֆոնի միջոցով	15 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր, համագործակցություն 1000+ ծառայություններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները	Անհայտ QR վճարումներ 21000+ ֆիզիկական վաճառակետերում, ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն	Ապահով վճարում Հայաստանի ավելի քան 900 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով
				
Ինտեգրված ստացիոնար հիմա վճարիչ հետո լուծումը առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ 21,000+ POS-ով, ներառյալ 9,000+ POS, որը տրամադրում է Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն	450,000+ ակտիվ քարտեր Առաջատարը Հայաստանում՝ VISA քարտերի թողարկման օլորտում	P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով Հայաստանում և արտերկրում	Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝ անհայտ QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ	Id+ հավատարմության թվային հարթակ վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

«Մի դրամի ուժը» ծրագրի ամփոփում



«Մի դրամի ուժը» մեր ընկերության Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերից է: Այն ուղղված է աջակցելու Հայաստանում կենսական և ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք ոլորտների զարգացմանը՝ առողջապահություն, կրթություն, կանաչ տնտեսություն, միջավայրի պահպանություն, սոցիալական պատասխանատվություն և հանրային անվտանգություն:

2020թ. հունիսի 5-ից սկսած Իդրամ հավելվածով, կայքով և տերմինալների միջոցով, իսկ այսուհետև նաև idbanking.am առցանց հարթակի և IDBank-ի տերմինալների միջոցով հաճախորդների կողմից կատարված բոլոր տեսակի վճարումներից «Մի դրամի ուժը» ծրագրին տրամադրվում է 1 ՀՀ դրամ:

- 2024թ.-ի առաջին ծրագիրը՝ 3 665 972 դրամ բյուջեով, ուղղվել է «Հայ մայրեր» բարեգործական հիմնադրամին: «Մի դրամի ուժն» այս անգամ աջակցություն է ցուցաբերել ոչ միայն հիմնադրամին, այլև անմիջապես շահառուներին. հավաքված գումարից 1 միլիոնի չափով «Հայ մայրեր» հիմնադրամի 20 շահառու ստացել է 50.000-ական դրամ արժեքով idplus նվեր քարտեր:
- Փետրվար ամսվա ընթացքում կուտակված 3.780.052 դրամը նվիրաբերվել է «Սիրի Օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամին՝ աջակցելու բաղկացրած դեմ պայքարող երեխաներին:



- «Մի դրամի ուժը» նախաձեռնության մարտ ամսվա ծրագրի շահառուն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպությունն էր: Կուտակված 4.017.648 դրամը հասարակական կազմակերպությունն ուղղելու է Հայաստանի անտառային ֆոնդի ավելացմանն ու կենսաբազմազանության պահպանման ծրագրերին:

- Ապրիլ ամսվա ծրագրի շահառուն 4090 հիմնադրամն էր, որը կուտակված 3.913.063 դրամ գումարն ուղղելու է քառօրյա և 44-օրյա պատերազմների մասնակից շուրջ հարյուր ուսանողների կրթավճարների տրամադրմանը: Հավաքված գումարից 1 միլիոնը 40.000-ական դրամի չափով idplus նվեր-քարտերի տեսքով հատկացվեց հիմնադրամի 25 շահառուի՝ մասնագիտական գրականության և այլ անհրաժեշտ գնումների համար:



- Մայիս ամսվա շահառուն Էպիլեպսիա ունեցող երեխաների ախտորոշմամբ, դեղորայքի ապահովման հարցերով ու բուժմամբ զբաղվող «Կյանքի ճանապարհ» բարեգործական հասարակական կազմակերպությունն էր: Հավաքված 4.101.050 դրամ գումարը ՀԿ-ն ուղղելու է իր շահառու ընտանիքների հոգսերի թեթևացմանը:

- 4.046.161 դրամ IDBank և Idram ընկերությունները փոխանցել են «Մի դրամի ուժը» նախաձեռնության հունիս ամսվա շահառու «Հզոր միտք» ՀԿ-ի «Հորիզոն» առաջնորդական ճամբարի իրագործման ծրագրին, որը հնարավորություն է ընձեռելու մարզերից շուրջ 75 երիտասարդների ստանալ առաջնորդի հմտություններ, չփվել գործարարների հետ և համայնքների զարգացմանն ուղղված գաղափարներ մշակել:

5

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ

22

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

23


Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:


2024 թվականի 1-ին կիսամյակում Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 19.2% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 31.8% և 68.5% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

Բանկային համակարգի տվյալները ներկայացված են առ 31.05.2024


Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ, սբորինգային մոդելների մշակմամբ և շարունակական թարմացմամբ

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հետևում է ինչպես իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվներին (ընդհանուր, ընթացիկ, LCR, NSFR իրացվելիության նորմատիվներ), այնպես էլ վերջիններիս ներքին՝ ավելի խիստ սահմանաչափերին:

Բացի նշվածից, իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է նաև Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդելի և սթրես-թեստավորման միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժույթային ռիսկի կառավարում

Արտարժույթային ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտարժույթային բաց դիրքերի կառավարում հետևելով սահմանված արտարժույթային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի մշտադիտարկում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում:

Բանկը շարունակական քայլեր է ձեռնարկում տեղեկատվական անվտանգության համակարգերի զարգացման, առցանց գեղձարարության կանխարգելման ուղղություններով:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյթինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «Այդի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2024թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդրել է Ռիսկի ախորժակի մոնիթորինգի համակարգ: Ռազմավարությամբ սահմանված ռիսկի ախորժակից շեղումների առկայության պարագայում Բանկը համապատասխան քայլեր է ձեռնարկում ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

- 1. IDBank-ի՝ 2024 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:
- 2. 2024 թվականի առաջին կիսամյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2024 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Մեր Արհամայն	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արթուր Համբարձումյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային Բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)